



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ա. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՄԱՏԱՂՕՐՀՆԷՔ Ս. ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑՈՅ 47ՐԴ ՏԱՐԵՂԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ

Կիրակի, 7 Նոյեմբերին, եպիսկոպոսական հանդիսաւոր Ա. Պատարագ պիտի մատուցուի Էնսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ մէջ, եկեղեցւոյ հիմնադրութեան 47-րդ տարեդարձին առթիւ:

Ա. Պատարագը պիտի մատուցանէ եւ մատաղօրհնէք պիտի կատարէ Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան եւ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը պիտի փոխանցէ:

Ա. Խորանին պիտի սպասարէ եկեղեցւոյ հոգեւոր հովիւը՝ Արժ. Տ. Ռազմիկ Զինյ. Խաչատուրեան:

Պատարագէն ետք, հաւատացեալները հրաւիրուած են մատաղի օրհնութեան, որ տեղի պիտի ունենայ «Աւետիսեան» սրահին մէջ, պատրաստուած՝ եկեղեցւոյ Տիկնանց Օժանդակ Մարմինին կողմէ:

Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ հիմնադրութեան տարեդարձին առիթով, ճաշկերոյթ տօնախմբութիւն մը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 5 Նոյեմբերի երեկոյեան, Արարատ Տան «Տեօքմեճեան» սրահին մէջ, Միշըն Զիլզ:

Ձեռնարկը կը վայելէ Առաջնորդ Սրբազան Զօր հովանաւորութիւնը:

Առաջնորդ Սրբազանը ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ իր պատգամը: Ներկայ պիտի ըլլայ նաեւ Ազգ. Վարչութեան անդամներէն Տիար Վահրիճ Փիլաւճեան:

Ձեռնարկը կազմակերպուած է եկեղեցւոյ հովիւին, հոգաբարձութեան եւ Տիկնանց Օժանդակ Մարմինին կողմէ. հիւրընկալութիւնը ստանձնած են Տիկին Ժանէթ Վարդազարեան եւ Տեր եւ Տիկին Ժոզէֆ եւ Նորա Սիմոնեան ընտանիքները:

EPISCOPAL DIVINE LITURGY AND BLESSING OF MADAGH ON THE 47TH ANNIVERSARY OF HOLY MARTYRS CHURCH IN ENCINO

On Sunday, November 7th, 2010, the 47th anniversary of Holy Martyrs Church in Encino will be celebrated with Episcopal Divine Liturgy and the blessing of *madagh*.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy and deliver the sermon. Parish Pastor Rev. Fr. Razmig Khatchadourian will assist at the altar.

Following the service, the Prelate will be led in a procession to "Avedissian" Hall where he will conduct the blessing of *madagh*, prepared by the parish Ladies Auxiliary.

The 47th anniversary banquet will be held on Friday, November 5th, at "Deukmejian" Hall of Ararat Home in Mission Hills.

The banquet, which is being held under the auspices of the Prelate, has been organized by Parish Pastor, Board of Trustees, and Ladies Auxiliary, and is being hosted by Mrs. Janet Vartazarian and Mr. and Mrs. Joseph and Nora Simonian.

The Prelate will attend and convey his message and blessings on this occasion.

Executive Council member Mr. Vahrij Pilavjian will also be among the guests in attendance.

ՀԱՅ ԿՆՈՋ ՏԱՐՈՒԱՆ ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ Ս. ԱՍՏՈՒԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԵՋ

Կազմակերպութամբ Ազգային Առաջնորդարանի Առաքելութեան Տարածման Յանձնախումբին, Հայ Կնոջ Տարուան տօնակատարութեան գլխաւոր հանդիսութիւնը տեղի պիտի ունենայ Երեքշաբթի, 16 Նոյեմբերին, երեկոյեան ժամը 7:30ին, Կլենտէյլի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ:

Ձեռնարկը կը վայելէ Թեմիս բարեջան Առաջնորդ բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի հովանաւորութիւնը: Պիտի բանախօսէ Ազգային Վարչութեան ատենապետուհի՝ Տիկին Ռիմա Պօղոսեան:

Խօսք պիտի առնեն նաեւ ՀՕՄ-ի, Համագգայինի, Հ.Ս.Ը.Ս.-ի եւ Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Միութեան ներկայացուցիչներ:

Նախատեսուած է նաեւ գեղարուեստական յայտագիր:

Ձեռնարկին աւարտին, հիւրասիրութիւն տեղի պիտի ունենայ եկեղեցւոյ սրահին մէջ: Մուտքը ազատ է:

"YEAR OF THE ARMENIAN WOMAN" CELEBRATION ORGANIZED BY THE PRELACY OUTREACH COMMITTEE TO BE HELD AT ST. MARY'S CHURCH

The Prelacy Outreach Committee has organized a celebration of the "Year of the Armenian Woman" to be held on Tuesday, November 16th, 2010, at 7:30 p.m., at St. Mary's Church in Glendale. The event is being held under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate.

The keynote speaker is Chair of the Prelacy Executive Council Mrs. Rima Boghossian.

The event will also feature remarks by representatives from the Armenian Relief Society, Hamazkayin, Homenetmen, and the Prelacy Ladies Auxiliary.

A cultural program of songs and recitations will also take place.

A reception will follow at the church "Armenak Der Bedrossian" hall.

Admission is free and open to the public.

ԹԵՄԻՍ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ 80-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ



Շաբաթ, 30
Հոկտեմբերի երեկոյեան,
Թեմիս Կիրակնօրեայ
վարժարաններուն
հիմնադրութեան 80րդ
տարեդարձին առթիւ,
ճաշկերոյթ-
տօնակատարութիւն մը
տեղի ունեցաւ Էսսիլոյի
Սրբոց Նահատակաց
Եկեղեցւոյ «Աւետիսեան»
սրահին մէջ:

Ձեռնարկը
կազմակերպուած էր Ազգ.
Առաջնորդարանի

Կիրակնօրեայ Դպրոցներու Վարիչ Մարմինին եւ Ծնողական Յանձնախումբին կողմէ եւ կը վայելէր Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութիւնը:

Ձեռնարկին ներկայ էին Ազգային Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի գոյգ վարիչները՝ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեանն ու Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեան: Իրագործուեցաւ կոկիկ յայտագիր մը:

Ներկայացուեցաւ Կիրակնօրեայ դպրոցներու հակիրճ պատմականը: Կատարուեցաւ մոմավառութիւն, նաեւ՝ գնահատագրերու յանձնում: Պաշտօնական յայտագրին փակման խօսքը արտասանեց Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան:

Ստորեւ, Առաջնորդ Սրբազանին խօսքը, յղուած՝ Անթիլիասէն, ուր ան կը մասնակցէր Ազգ. Կեդրոնական Վարչութեան ժողովներուն.-

*Սիրելի Միաբանակից եղբայրներ եւ Արժանապատիւ Հոգեւոր Հայրեր,
Պատուարժան Վարիչ Մարմին Թեմիս Կիրակնօրեայ Դպրոցներուն,*

Յարգելի Ղաստիարակներ, ծնողական մարմիններ եւ աշակերտներ

Ս. Աթոռոյս Անթիլիասի Մայրավանքէն կ'ողջունենք բոլորդ, Կիրակնօրեայ Ղարոցներու հիմնադրութեան 80ամեակին նուիրուած այս հանդիսութեան առիթով: Ժողովական աշխատանքներու բերումով կը գտնուինք Անթիլիաս, եւ սա պահուն, մեր աղօթքներով կը միանանք Ձեզի, ոգեկոչելու համար յիշատակը մեր Վեհափառ ու Սրբազան Յայրերուն, որոնք ութ տասնամեակներ առաջ, երանաշնորհ Տ. Տ. Սահակ Ա. Կաթողիկոսի նախաձեռնութեամբ ու անոր շուրջը բոլորուած՝ հիմը դրին Կիրակնօրեայ Ղարոցին ու բացին մեր նորահաս սերունդներուն միտքերուն ու հոգիներուն լուսաւորման ուղի մը: Հիմնադիրները յիշելու կողքին, կը տօնախմբենք ծառայական կեանքը այն նուիրեալներուն, որոնք մինչեւ օրս վառ կը պահեն 1930 թուականին բոցավառած ջահը:

Կիրակնօրեայ Ղարոցի հիմնադրութիւնը, սիրելիներ, ժամանակի պահանջին արդիւնքն էր: Պահ մը երթանք ետ, մինչեւ 1930 թուականը, պատկերացնելու համար այն պայմանները, որոնց մէջ կը գտնուէին Յեղասպանութենէն փրկուած ու գաղթական դարձած մեր ժողովուրդը, նաեւ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը: Հայ մանուկն ու պատանին կարիքն ունէին հոգելոր սնունդի, քրիստոնէական դաստիարակութեան ու մեր նախնիներու հոգելոր ժառանգութեանց հետ հաղորդակցութեան: Հայկական կրթական օճախներուն կողքին, Կիրակնօրեայ դպրոցը օրուան հրամայականն էր: Հիմնադրութենէն տասնամեակներ ետք, մենք գիտենք ու կը զգանք, որ նոյն հրամայականը այսօր ալ ի գօրու է ու պիտի մնայ, մանաւանդ երբ նկատի ունենանք որ աշխարհացրիւ հայութիւնը, մեր գաղութին պէս՝ մայր հայրենիքէն հեռու ինկած օճախներ, որքա՛ն կարիք ունին հոգելոր սնունդի, քրիստոնէական ու հայկական մեր ժառանգութեանց հետ հաղորդակցութեան:

Վստահ ենք, որ այս տօնակատարութեան պահուն, պիտի հնչէ Կիրակնօրեայի Մաղթերգը: Միասնաբար պիտի երգէք «Կեցցեն յաւերժ, անսասան, ՝ Հիմնադիրներ եւ բարերար՝ Կիրակնօրեայ լուսոյ տան՝ Ջահակիրներ վեհափառ»: Այո, սիրելիներ, Կիրակնօրեայ դպրոցը լոյսի՝ քրիստոնէական ու հայկական լոյսի տուն է, որմէ արձակուած շողերը, ինչպէս այսօր, նոյնպէս ալ յառաջիկայ տասնամեակներուն ու դարերուն պիտի ճաճանչեն հայ մանուկներու ու պատանիներու, նաեւ անոնց ծնողներու հոգիներուն մէջ, որպէսզի «վառ մնայ դարեր դեռ, սրբաճաճանչ Հայ Հոգին»:

Յոբելէնական այս ուրախ առիթով, անգամ կը եւս կը գնահատենք Քրիստոնէական Ղաստիարակութեան բաժանմունքի վարիչներուն՝ Գերայ. Տ. Միւռն Օ. Կրդ. Ազնիկեանի, Հոգշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիլիւմեանի նուիրեալ ծառայութիւնները, Կիրակնօրեաներու տեսուչներուն եւ ուսուցիչներուն անսակարկ ծառայութիւնները, մեր հոգելոր հովիւները, հոգաբարձութիւնները, որոնք սատար ու քաջալեր կը հանդիսանան մեր նորահաս սերունդներուն հոգելոր դաստիարակութեան կենսական գործին: Կ'աղօթենք առ բարձրեալ Աստուած, որ լոյսերու մէջ հանգչեցնէ Կիրակնօրեայ Ղարոցի հիմնադիրներուն ու մեզմէ առյաւետ բաժնուած ծառայողներուն հոգիները, իսկ նուիրական առաքելութիւնը

ժառանգողներուն՝ այսօրուան աշակերտներուն ու դաստիարակներուն աշխատանքի դաշտերը պահէ իր օրինաբաշխ Ս. Աջի հովանիին ներքեւ:

Սիրոյ ջերմ ողջունիւ՝

*Աղօթարար՝
Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Առաջնորդ*

PRELACY SUNDAY SCHOOLS 80TH ANNIVERSARY CELEBRATION



On Saturday, October 30th, the 80th anniversary of Prelacy Sunday Schools was celebrated at "Avedissian" Hall of Holy Martyrs Church in Encino.

The celebration was held under the auspices of the Prelate and was organized by the Sunday Schools' Directorate & PTO.

Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian were in attendance, as well as

hundreds of Sunday School students, teachers, parents, and supporters.

The program included a slideshow presentation of the history of the Sunday Schools, a candle-lighting ceremony, and the presenting of letters of commendation to Sunday Schools' volunteers.

Closing remarks were delivered by Very Rev. Fr. Muron Aznikian.

ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ 60-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՃԱՇԿԵՐՈՅԹ

Շաբաթ, 6 Նոյեմբերի երեկոյեան, Հայ Կրթական Հիմնարկութեան 60-րդ տարեդարձի ճաշկերոյթ տօնակատարութիւնը տեղի պիտի ունենայ downtown-ի Ritz Carlton պանդոկին մէջ: Գլխաւոր բանախօսն է Տոքթ. Արմէն Սարգիսեան: Յատուկ գնահատանքի պիտի արժանանան Փրոֆ. Ռիչըրտ Յովաննէսեան ու Տէր եւ Տիկին Յակոբ եւ Միւսա Շիրվանեանները:

Առաջնորդ Սրբազանը ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին ու պիտի փոխանցէ իր օրինութեան ու գնահատանքի խօսքը: Առաջնորդ Սրբազանին

պիտի ընկերանայ Ս. Խաչ Մայր Տաճարի հովիւներէն Արժ. Տ. Աշոտ Քիւյ.
Գամպուրեան:

**ARMENIAN EDUCATIONAL FOUNDATION
60TH ANNIVERSARY GALA DINNER**

On Friday, November 6th, the Armenian Educational Foundation will celebrate its 60th anniversary with a gala dinner at the Ritz Carlton in Downtown Los Angeles.

The evening's keynote speaker is former Prime Minister of Armenia, Dr. Armen Sarkissian. During the banquet, Professor Richard Hovannisian will be honored with the AEF Lifetime Education Award, and Mr. and Mrs. Hacob and Mina Shirvanian with the AEF Lifetime Service Award.

The Prelate will attend and convey his blessings and congratulatory remarks. He will be accompanied by Pastor of Holy Cross Cathedral Rev. Fr. Ashod Kambourian.
